Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1110-25.06.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հավելվածում՝

1) 2.3-րդ աղյուսակի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի անվանումը	**Համայնքի անվանումը**	**Բնակավայրի անվանումը**
Արմավիր	2. Վաղարշապատ	Էջմիածին քաղաք
		Աղավնատուն գյուղ
		Ամբերդ գյուղ
		Այգեշատ (Էջմիածնի շրջ.) գյուղ
		Արագած գյուղ
		Արշալույս գյուղ
		Գեղակերտ գյուղ
		Դաշտ գյուղ
		Դողս գյուղ
		Լեռնամերձ գյուղ
		Ծաղկալանջ գյուղ
		Ծաղկունք գյուղ
		Ծիածան գյուղ
		Հայթաղ գյուղ
		Հովտամեջ գյուղ
		Մոնթեավան գյուղ

		Մրգաստան գյուղ
		Շահումյան գյուղ
		Ոսկեհատ գյուղ

Հոդված 2. Օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ աղյուսակի 87-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 12.1-ին, 12.2-րդ, 12.22-րդ հավելվածներում «Խոյ» բառը փոխարինել «Վաղարշապատ» բառով:

Հոդված 4. Օրենքի 12.23-րդ հոդվածը եւ հավելվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 6. Օրենքի 12.24-րդ հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի.

Հավելված 1
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման
մասին» օրենքում փոփոխություն
կատարելու մասին» օրենքի

«Հավելված 12.24
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վաղարշապատ համայնքը գտնվում է մարզի արեւելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին, արեւելքից եւ հարավ-արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Փարաքար, հարավ-արեւելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզին, հարավից եւ արեւմուտքից «Դ»-«Ե»

հատվածով՝ Արաքս, «Ե»-«Զ» հատվածով՝ Մեծամոր, «Զ»-«Ա» հատվածով՝ Արմավիր համայնքներին:»:

Հոդված 7. Օրենքի 12.25-րդ հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի.

Հավելված 2
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման
մասին» օրենքում փոփոխություն
կատարելու մասին» օրենքի

«Հավելված 12.25
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արաքս համայնքը գտնվում է մարզի արեւելյան մասում:

Համայնքը հյուսիսից եւ արեւելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վաղարշապատ համայնքին, արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արեւմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Մեծամոր համայնքին:»: